# ՉԿԱ ԱՎԵԼԻ ՅԵՐՋԱՆԻԿ ԲԱՆ, ՔԱՆ ԱՊՐԵԼ ՅԵՎ ԱՇԽԱՏԵԼ ՄԵՐ ՍՏԱԼԻՆՅԱՆ ԴԱՐԱՇՐՋԱՆՈՒՄ

Շուտով Հայկական ԽՍՀ-ն ունենալու յե սեփական Սահմանադրություն: Մեր Սոցիալիստական յերկրի լավագույն մարդիկ կառավարության, կուսակցության հանդեպ, ազատությունների մեծ խարտիայի հանճարեղ ստեղծող ընկեր Ստալինի հանդեպ իրենց տածած մեծագույն վստահության ու սիրո մթնոլորտում հաստատելու յեն այն Սահմանադրության նախագիծը, վորը կյանքի մեջ ե մտնելու վորպես մեր սոցիալիստական հասարակակարգի հիմնական օրենքը: Հանդիսանալով նոր իմաստ ունեցող իսկական համաժողովրդական ակտն ե նոր եջ բանալով մեր հանրապետության յերջանիկ ու բերկրալից կյանքի համար, այդ փաստը, ստալինյան խարտիայի այդ մեծագույն պատմական վավերագիրը, չի կարող սիրո ու յերախտագիտության նոր, անհուն զգացմունքով չլցնել մեր սրտերը: Մանավանդ մեզ համար, վոր ճանաչում ենք նախկին ցարական Հայաստանը՝ վորպես հետամնաց, կիսապատրիարքական ծայրամաս, վոր տեսել ենք վողորմելի, խղճուկ խմբապետական Հայաստանը — մեզ համար այժմ Խորհրդային Հայաստանը Սահմանադրության նախագծի համաժողովրդական հաստատման նախորյակին մի չտեսնված յերջանիկ յերկիր ե:

Անցյալի աղքատ, ավերակային Հայաստանը, վորը բզկտվում եր ազգամիջյան պատերազմներով, վորը հնարավորություն չուներ նույնիսկ նվազագույն չափով բավարարելու իր վոչ միայն կուլտուրական, այլ նույնիսկ կենսական պահանջները, այժմ մեր Միության մյուս հանրապետությունների հետ հավասար հանդիսանում ե, նոր բերկրալից, յերջանիկ, լիարժեք կյանքի մի յերկիր:

Վոչ մի տարակույս չի կարող լինել, վոր մարդկային իրավունքների նոր, ստալինյան Սահմանադրությունը եվ ավելի կամրացնի ԽՍՀՄ-ի ժողովուրդների յեղբայրական բարեկամությունը, ավելի մեծ խանդավառություն կառաջացնի բոլոր աշխատանքներում և ե՛լ ավելի կբարձրացնի մեր պարտականությունը՝ մի մարդու պես պաշտպան կանգնելու մեր բոլոր նվաճումներին:

Այսպիսի պատմական դարաշրջանում ապրելն ու աշխատելը յերջանկություն ե յուրաքանչյուր ազնիվ քաղաքացու համար:

Յերևանի Բժշկական ինստիտուտի պրոֆեսոր՝
Ա. ՄԵԼԻՔ-ԱԴԱՄՅԱՆ